# ՓԵՏՐՎԱՐԻ 6-ԻՆ ԿԸՆԹԵՐՑՎԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 4 փետրվարի 2000 թ.:**

Փետրվարի 6-ին, կիրակի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ս. Պատարագի ընթացքում հանդիսավորապես կընթերցվի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը:

Հայ Առաքելական Եկեղեցու ավանդույթի համաձայն, նորընտիր Հայոց Հով-վապետը Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, հոգևորակա-նաց ողջ դասին և համայն հայությանը Հայրապետական անդրանիկ ուղերձով կներկայացնի կաթողիկոսական առաքելության իր ծրագրերն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսության գործունեության մասին իր մտորումները:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*



ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ